

Յ Ե Յ Տ Ե Ր Ե Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ԱՌ ԵՐԳԵՍԻՐ ԵՄԻՐԵՅՍ ՄԵԾԵՊԵՏԻԻ ԵՂԵՅՍ

Ե Ի Հ Ա Յ Ա Ջ Գ Ի Ե Ղ Բ Ա Ր Ս

Եթէ լուսաւորեալ ազգերու բարոյական յառաջագիմութիւնը և ազգային փառաւորութիւնը ըստ մեծի մասին լրագրոյ ընթերցանութենէն յառաջ կուգան : Ինչու որ լրագիրներու միջոցաւ հանձարեղ մարդերու հնարած արուեստները ու գիտութիւնները կամ բարեգործ անձանց ըրած ազգագուտ բարիքը՝ թէ իրենց քաղաքակիրճներուն և թէ աշխարհիս չորս կողմի բնակիչներուն իմացուելով՝ բնականաբար ամենուն սրտին մէջ բարի նախանձ մը կը դրդուի և անոնց հետեւելու փափաք մը կը ծնանի . նմանապէս վնասակար չարութիւն մըն ալ գործուելու ըլլայ նէ լրագրի միջոցաւ լուրը տարածուելով ամեն ազգի բարոյական կրթութեան չարիւղը քիչ կամ շատ արհամարհանք մը կը ցուցնուի ու անանկ գործերէ կը զգուշացվի : Հին և նոր պատմութիւնները անցած դարցած գործերը մարդուս մտքին առջեւը բերելով ազգակործան հետեւանք ունեցողներէն կը զգուշացնեն և ազգային յառաջագիմութեան պատճառ եղողներուն հետեւելու կը յորդորեն . ասոր համար ալ ուսումնարաննաց մէջ գլխաւոր գիտութիւններուն կարգը անցած են . ուստի լրագիրն ալ, ինչպէս որ վերը ըսինք՝ մի և նոյն պաշտօնը կատարելու համար ժամանակակից անցքերու պատմութիւն համարուելով՝ որչափ աւելի յարգանաց արժանի է արդեօք :

Ըրագիրներէն յառաջ եկած անհամար բարութիւնները լուսաւորեալ ազգաց մէջ աղէկ ճանցըլած ըլլալով, անհամար՝ օրական, շաբաթական և ամսական թղթեր կը տպուին և ամեն վիճակի մարդկան կարգացընելու համար ժամանակին կը ծախվին : Ըրագիրներու ինչ աստիճան օգտաւէտ ըլլալը Վէհափառ Սուլթան (պոլիս) Եփեսոս առատագութ կայսեր լուսաւորեալ կառավարութեան ալ յայտնի ըլլալով՝ բաւական ժամանակէ հետէ տեսակ տեսակ լրագիրներու հրատարակութիւնը թոյլ տուած է և առատաձեռն օգնութեամբ ալ կը քաջալերվի : Եթէ միթարութիւն է մեզ յիշել թէ մեր սիրելի ազգն ալ հինգ տասը տարիէ ՚ի վեր աս բարութենէն զրկուած չէ, և այս փոքր միջոցիս մէջ ինչքան յառաջագիմութիւն ըլլալն ալ ամենուն յայտնի է : Ազգային լրագրոյ միջոցաւ՝ մեր սիրելի ազգը ոչ միայն օտար տէրութեանց և ազգաց երկիրներու մէջ հնարուած գիտութիւնները և պատահած դէպքերը իմանալով բազմաճիւղաւ և աշխարհագէտ կ'ըլլայ, հապա նաեւ աշխարհիս չորս կողմը տարածուած համազգի եղբայրներնուս հետ դրեթէ շարունակ թղթակցութիւն մը կը պահէ : Ըրագրոյ միջոցաւ գիտեմք ուր են մեր եղբայրները . ի՞նչ վիճակի մէջ են, յառաջագիմութիւնն ի՞նչ աստիճանի հասած է, բարոյական կրթութեան միջոցներն ի՞նչ քան են : Ըրագրոյ միջոցաւ ուսումնարանն ընկերութիւններու հաստատուիլը կը լսենք, մենք ալ նոյն սիրով մէկ մէկու հետ ընկերանալոյ կ'աշխատինք, և սոս առիթով ազգիս մէջ միաբանական սէրը կ'աւելնայ : Եթէ ասոնք՝ և ասոնցմէ ալ շատ աւելի են լրագրոյ օգուտները, որոնց մեր ազգը օր ըստ օրէ եւս առաւել մասնակից ընելով Եւրոպայի կայսեր բարեխնամ կամացը համեմատ հաւատարիմ հայ հպատակները աւելի լուսաւորեալ և բարեկիրթ ընելու յուսով ազգային շաբաթական լրագիր մը հրատարակելը որոշեցինք, որուն ետք և բարեկիրթ ընելու յուսով ազգային շաբաթական լրագիր մը հրատարակելը որոշեցինք, որուն անունն ալ ՆՈՅՆԱՆ ԱՂԱԿՆԻ ԳՐԻՆԷ . ինչու որ նախ Վէհափառ Սուլթանին հանապազօրեայ բարութիւններուն լուրերը ասդիէն անդիէն քաղելով մեր ազգին հաղորդելու է որ ասանկ լուսաւորեալ կառավարութեան շնորհօք լայնեւած անվրդով երջանկութիւննուս չափը ու գինը ճանչնանք և երախտագիտութեան պարտքերնիս կատարենք . երկրորդ՝ մեր սիրելի Հայաստանէն և այս կողմերէն ազգասէր սիրտերուն միջոց ջանկալի լուրեր բերելու է, որն որ մինչեւ հիմայ Սայրաքաղաքիս մէջ հրատարակուած լրագիրը անբաւական եղած է մեզ հաղորդելու : Երրորդ՝ զատ ՆՈՅՆԱՆ ԱՂԱԿՆԻՈՅՆ մէջնոր նորքաղաքական լուրեր, ընտիր ընտիր բանասիրական յօդուածներ գրուելու են : Բայց ազգասէր Լմիրայք, մեծապատիւ Վրայք և համազգի Լղբարք, մեր այս խոստմունքները կատարելու և ՆՈՅՆԱՆ ԱՂԱԿՆԻՈՅՆ հրատարակութիւնը անդադար շարունակելու համար ձեր ներողամտութեան և ազգասիրական քաջալերութեանը կարօտ ենք, և ամենայն վստահութեամբ յուսալով որ ձեր մարդասիրական ձեռնտուութիւնը մեզմէ պիտի չի խնայէք՝ յառաջագոյն մեր երախտագիտութիւնը կը յայտնեմք :

ՆՈՅՆԱՆ ԱՂԱԿՆԻ շաբաթը անգամ մը պիտի տպվի, և տարեկան գինը թէպէտ առ այժմ հարիւր քսան զուրուշ պիտի ըլլայ, բայց աստուծով ստորագրութեանց թիւը ներելու ըլլայնէ աւելի աժընցունելու յոյս ունիմք :

Պէտք եղած տեղերը նշանակուելու գործակալներուն անունները ժամանակին պիտի հրատարակենք : Ընայժմ ստորագրուել ուղղորդել թող բարեհաճին իրենց բարեմիտ կամքը յայտնել Սարկոսեան Սարկոս ազգային ՚ի կէտիք փաշայ կամ ստորագրեալ հրատարակիչներուն :

Ի՞նչ մեծ պարծանք է մեծ Տերութեան նախարարի մը իւր Կայսեր կողմանէ ասանկ նախանձելի վկայութեան. արժանի ըլլալը . ասկէ մեծ վարձատրութիւն կրնայ մի սպա-

սեղ հաւատարիմ պաշտօնեայ մը :

Իսկ այս անգամ կրկին փոխարքայ ընտրուելուն կայսերական հրովարտար, որոյ հաւատարիմ թարգմանութիւնը հետեւեալն է, առատագութ կայսեր բարձրագոյն յատուկ շնորհացը հայերին կրնայ համարուիլ :

« Իմ բարձրագոյն Վէդիքս Բէշտ փաշա .

« Գիտարքայութեան պաշտօնը մեր բարձրագոյն Տէրութեան ամէն գործերուն ժողովման կեդրոնը ըլլալով՝ քու մինչեւ հիմա ցուցնում խոհեմութեան ու հաւատարմութեան համեմատ՝ մեր կայսերական Տէրութեան գործողը մէջ ըրած անխնայ ճշգրտութեամբ քանակաւ յարգելու արժէքը մեր մօտ ծանօտեցում ըլլալուն համար՝ քու նախորդ Բառք փաշային տեղը՝ յիշեալ փոխարքայութեան պաշտօնը վերստին քու արժանաւորութեանը շնորհեցին :

« Երգարութեան բարձրագոյն Լոնին նախագահութիւնն ալ ամենակարեւոր պաշտօնը ըլլալով՝ յիշեալ Լոնին անդամներէն նախորդ Կրեմլին կուսակալ Սուսթաֆա փաշան նոյն պաշտօնին յարմար և յաջողակ երեւելուն համար այն նախագահութիւնն ալ յիշեալ Սուսթաֆա փաշային յանձնուեցաւ :

« Լեւոնաբարձրեալ ու ամենատուրը Լուսնայի՝ օգնութիւնը ամենուն վրայ ըլլայ .

« Լոն կայսերական հրովարտար արտաքին գործող նախարար վեմափայլ Լոն փաշային յատուկ առաջանութեամբ մեծ Լոնաբարձր սրահին մէջ կարգադրուած առեւտրէն բոլոր երեւելի հանդիսականներուն սիրտը ուրախութեամբ ու հաճութեամբ լեցուց : Բարձրագոյն փոխարքային անհամեմատ միջոցաւ քանի է, որ մեծագոր Տէրութեան օգտին ու բարեկամութեանը համար յանձնառու եղած անխնայ աշխատանքը ու աննոց ալ հաւատարմութենէ յառաջ գալը Օգոստոսիա կայսրը աղէկ ծանօցած է :

Լեւոնային արժանաւորութեան, թէ յաջողութեան, Տէրութեան գործող թէ չթէ փեղեկ-Ռեան և անոց բարեկամութեանը համար անխնայ ջանադրութեան, խնդիրութեան ու մանաւանդ հաւատարմութեան համար կայսերական հրովարտար մէջ աւանդուած ասանկ ամենաբարձր վարչութիւնները շատ թանկագին գանձեր են, և յիշեալ գովելի հանգամանքը միայն բարձրագոյն Բէշտ փաշային յատկացեալ ձեռք են, որոց բարեկամութեան ինքնակալին քով յարգու և արժէք ունենալն ալ նոյն ձեռք տէր եղող անձին մեծ խրախույս և քաջաբերութիւն է :

« Սեմափայլ Սուստաֆա փաշան, որուն վերաբերեալ կայսերական հրովարտարով արգարութեան բարձրագոյն Լոնին նախագահութեան պաշտօնը յանձնուեցաւ, իւր երկարամիտութեամբ հաւատարիմ ծառայութեան ընթացքին վեմափայլ Սուստաֆա փաշան իրենց կառավարիչ ու ղարկուի . բայց Օգոստոսիա Սուստաֆա փաշային վեմափայլութեան խոհեմ ու հաւատարիմ ծառայութիւնները Տէրութեան աւելի ծանր գործերուն մէջ հարկաւոր սեպելով, յիշեալ նախագահութեան բարձր պաշտօնը յանձնեց անոր : Լեւոնիմա եմք որ վերստին Սուստաֆա փաշային բազմամեայ փորձաւորութեամբն ու քաջ հմտութեամբն աս նոր պաշտօնին մէջ նոր բարեկարգութիւններ ընելով՝ սիրտ արգարացնէ հասարակաց անկախութիւնները :

« Լոնայ 24 ին կիրակի օրը նախորդ փոխարքայ բարձրագոյն Բառք փաշան բարձր Լոնին տեսնել (Թէպէտ Կրեմլին) անուանեցաւ, և նոյն օրը արքունի հրովարտարով բարձրագոյն Բառք երթալով՝ սովորական պատուով ընդունուեցաւ :

« Հետեւեալ երկուշաբթի օրը թիւսայի հանդէս ըլլալով՝ մեծագոր Տէրութեան բոլոր նախարարները նոր ընտրութիւններուն համար շնորհակալեաց խոնարհութիւնները վեմափայլ ինքնակալին մատուցանելու գնացին կայսերական Զառմի պալատը :

« Լոնայ 28 ին կայսերական հրովարտար կառ Օգոստ փաշան Վարնայի քայմաբաժնի անուանեցաւ :

« Սէհմէտ Վէհայի Էֆէնտին Սիրովի քայմաբաժնի անուանեցաւ :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԳԱՂԱԽԱ : Փարիզ, 18 և 19 փետրուարի : Հասարակագիտութեան նախագահ իշխանին հրամաններով Գաղղիոյ ամէն քաղաքական տարեգրաններուն տօնախմբութիւնը վերջացաւ, բայց ի տօնախմբութենէ տարեգրանին սրայ հանդէսը օգոստոսի 15 ին կը կառարուի, և որ այսուհետեւ միակ ազգային տօն ծանօցուելու և կատարուելու է : Լոն տօնը մեծ Լարօնի կայսեր ժամանակը հաւատարմութեամբ էր : Լոն վրի պալատը ազգային թանգարան մը հաստատուելով՝ ի սկզբանէ մինչեւ հիմա Գաղղիոյ վրայ տիրապետած եղող ամեն իշխաններուն, մանաւանդ մեծ Լարօնի վերաբերեալ իսկական առաքիտները սիրտ հաւաքուին ու պահուին ըստ կարգի ժամանակագրութեան :

« Էդէսին պատուանշանը կայսերութեան ժամանակը ինչձեռով հաստատուած էր նէ՛ կրկին նոյն ձեռով սիրտ ըլլայ այսուհետեւ :

« Լոն Լարօնի իշխանը օտար տէրութեանց կառավարութիւններէն իւր նոր իշխանութեանը համար շնորհաւորութեան նախագահներ տուցաւ ի պատասխան իւր այս մասին զրկած ծանուցական դիրքուն : Լոն տի Լախագահ արտաքին զբաղմունքներէ ազատ ըլլալով՝ Գաղղիոյ ներքին գործող բարեկարգութեանը զբաղեալ է, և ամէն օր նոր հրամաններով օրէնքներ կը հաստատուէ : Բրա՛նստիստութիւններէն կ'երեւի որ ի նշան երախտագիտութեան իւր յաւերժայիշատակ հօր եղբորը (որոյ մեծ անուանը պարտաւոր է գլխաւորաբար իւր այժմեան իշխանութիւնը) անոր ժամանակները հաստատուած կառնները գործադրելու կ'աշխատի, (ինչպէս կը տեսնուի վերոյիշեալ հրամաններէն) և այս ընթացքներէն ոմանք գուշակել կ'ուզեն թէ Լախագահին միայն կամաց կամաց գաղղիացիները կայսերական իշխանութեան կողմը հակել է :

ԱՆԳԱԽԱ 17 փետրուար 1852 : Լոն օրուան ազգային խորհրդանոցին նիստը Լոն Դոն Լոնի ազգային պահապան զօրաց նորագ հաստատուելուն վրայը ըրած առաջարկութեանը զբաղեցաւ : Լոն Լոնի ատեւաբանութեան գլխաւոր նիւթը հետեւեալ լին է :

« Թէպէտ ամենեւին հաւանական չէ որ Լոնիոյ տէրութիւնը կամենայ երբեք ուրիշ որ և իցէ տէրութեան դէմ պատերազմ բանալ, բայց ըստ սրում մեր հին դաշնագրութիւններուն պահանջմամբ կրնանք օրին մէկը օտար տէրութեանց մէկուն հրաւիրանքը անոր օգնութեանը երթալու պարտաւորել, կամ մեր հետեւոր երկիրներուն մէջ գտնուած քաղաքական իրաւունքները կամ առեւտրական գործառնութիւնները պաշտպանելու համար պատերազմական միջոցներու յաւանայից ձեռք դարձել, ասկէ զատ ըստ ուրում օտար յարձակումներէ մեր երկրին պաշտպանութիւնը առաջին և գլխաւոր պարտաւորութիւնն է, կ'առաջարկեմ որ ազգային

պահապան զօրաց գունդերը կազմուին միայն Լոնիոյ մէջ, իսկ Լոնիոյ և Վիտիոյ բնակիչները այս կանոնագրութեանն ազատ ըլլան, որովհետեւ այն երկիրները պաշտպանութեան ուրիշ միջոցներ ունին : Երբեք պահապան զօրաց գունդերը առաջին տարին 20 էն մինչեւ 23 տարեկան երիտասարդներէ բաղկանան, որով 80,000 պահապան զօրք կըրնայ ժողովուիլ. իսկ հետեւեալ տարիները 20 էն մինչեւ 21 տարեկան երիտասարդներ միայն ընտրուին : Լոնի տարին՝ ազգային պահապան զօրքը միայն 28 օր, և հետեւեալ տարիները միակ 14 օր իրենց յատկացեալ տեղերը գումարուելով՝ պէտք եղած զինուորական կրթութիւնները ընդունին : Երբեք պահապան զօրաց պաշտօնատարներուն միայն երրորդ մասը կառավարութեան կողմանէ, և մնացեալ երկու երրորդ մասը իւրաքանչիւր կամութեան տեղակալ Լոնի կողմանէ ընտրուին : Լոն յուսում որ ազգային խորհրդանոցը սիրտ ընդունի աս առաջարկութիւնն, որոյ գործադրութիւնը միայն 200,000 լիւրայի (այսինքն 22 միլիոն զուգուշի) կարօտ է : (Կարծիքներէն հետ ունեցած բարեկամական յարաբերութիւններու փոփոխութեան, մեր կառավարութեան կողմանէ ամենեւին երկրայութիւն չըլլալուն ապացոյց ան է որ կանոնադր զօրաց վրայ միայն 4,000 մարդիկ և թնդանութեամբ զօրաց վրայ միայն 1,000 մարդիկ աւելցնելը կ'առաջարկեմ » :

Լոն Լոնի այս առաջարկութիւնը Լոն Լոնի կողմանէ մեծ հաւանութիւն գտաւ, և ի պաշտպանութիւն այնորիկ ճարտարախօս զեռաւոր ընտիր ատենաբանութիւն մը ըրաւ, որուն թարգմանութիւնը լոնաբար աս օրուան թերթին մէջ չըլցանք պարունակել : Լոն Լոնի Լոնի և պարուն Օքսնէլը պահանջեցին որ Լոնիոյ բնակիչները աս օրէնքէն դուրս չգնան : Թոմսն գնդապետը և պատերազմի նախարար պարուն Փօքս Սթըլ Լոն Լոնի առաջարկութիւնը պաշտպանեցին : Իսկ պարունայ Լոն Լոն և Բալպարիս արեւելահայերը հակառակեցին առաջարկութեանը իբր անօգուտ և աւելորդ ծախսը աղբիւր :

Պարուն Բալպարիս արեւելահայեր ըսաւ թէ Լոնիոյ նաւատորմիւր, որուն համար խաղաղութեան հաստատուած ժամանակէն մինչեւ հիմա 250 միլիոն լիւր սթըլին ծախս եղած է, բաւական է, եթէ ըստ պիտելոյն գործածուի, թէ օտար յարձակումներէն մեր երկիրը ազատել, և թէ հետեւոր երկիրները ունեցած իրաւունքնա պաշտպանել :

Օնտոյան ատենաբանութիւններէ ետքը Լոն Լոնի հաւանութիւն տրուեցաւ որ ազգային պահապան զօրաց հաստատուելուն համար ըրած առաջարկութիւնը ազգային խորհրդանոցին ներկայացնէ :

« Փետրուարի 18 Լոն Լոնի ազգային խորհրդանոցին անդամներուն ընտրութեան իրաւունքը ընդարձակելու համար նոր կանոններու հաստատութեանը վերաբերեալ շատոնցմէ խոստացած և սպասուած առաջարկութիւնը ներկայացուց : Լոնաբարկուած նորագութեան մէկ առաքիտ նորընտիր անդամաց ազգային խորհրդանոցին մէջ առաջին անգամ նստելու ժամանակը ըրած երդմանը կը վերաբերի, որն որ առաջին նախարարը կ'առաջարկէ որ պատգամաւորաց իրիշը աւելի ազգութեան կերպիւ պարտաւորեալ խորհրդով յօրինուած ըլլայ :

Լոնիոյ սահմանադրական օրինաց մէջ ասանկ երեւելի նորագութիւններ մտցունելու Լոն Լոնի յիշեալ ծանր առաջարկութիւնը գուցէ ազգային խորհրդանոցին մէջ ընդունուի, թէպէտ և հիմակուց շատերուն կողմանէ մեծ հակառակութիւն կ'երեւի . բայց Լոնիոյ Լոնին մէջ յաջողութիւն գտնուող նախքը խիստ երկրայելի է : Լոն որ աւելի ուշագործութեան արժանի է, աս վերջի առաջարկութեանն ծանր հետեւանքներ կը գուշակուին :

Սեմին Պրիտանիոյ և Իռլանտիոյ ընտրուական ցուցակներուն նայելով Լոնիոյ ազգ

գային խորհրդանշոցի անդամները ընտրելու իրաւունք ունեցող անձանց թիւը 1850 ին 1.050.187 հոգի էին որոց 471.602 ը քաղաքային և 578.585 ը գիւղօրէից բնակիչներէն էին :

— Ընդգրկող տէրութեան կողմանէ տակէ առաջ Փարիզ գետապան գտնուող Նօրմանդիի Սարբէզը Հնդկաստանի ընդհանուր կուսապալ անուանեցաւ :

— Երեւելի լը : 1 օնորա 21 փետր . 1852 : Վիէնայի բոսթայով առնուած լուրերէն կ'իմանալք թէ Ենդգրկող տէրութեան առաջին նախարար 1 օրտ Ղ'օն Սրսէլը իւր կողմնակից նախարարներով պաշտօնէն հրաժարուեր է : Այս յանկարծակի հրաժարման պատճառները և ո՛չ 1 օրտ Սրսէլի յաջորդին անունը դեռ չիմացուեցան : Ոմանք 1 օրտ Սթանլէյի անունը կուտան , բայց առանց ճիշդ տեղեկութեան : Ուստի լրագրոյս հետեւեալ թուոյն կը թողուր հասարակութեան հետաքրքրութեանը արժանաւոր աս երեւելի գեղեցիկութեան վրայօք ընդարձակ տեղեկութիւն տալ մեր յարգոյ ընթերցողներուն :

ՍՊԱՆԻԱ : Իզապէլա Բ . Թագուհին հըրամայեց որ արքայապետին հարուածներուն վտանգէն խուսձոյ ողորմութեամբը աղաւթներէն յիշատակութեանը համար հասարակաց ստորագրութիւն մը ըլլալով՝ հաւաքուած գումարով մէկ կամ քանի մը բարեպաշտական շինութիւններ հաստատուին : Ըստիւնը Ենկերանոց իշխանուհւոյն պիտի անուանի :

Ստորիտի հասարակութիւնը տօնախմբուածութեան մեծ հանգիստներ ու ճրագավառութիւններ կը պատրաստեն 'ի նշան ուրախութեան թագուհւոյն առողջանալուն համար :

ՌՈՒՍԱՍՏԱՆ : 'Ն . Ն . Ս' . Ս' . կայսրն ու կայսերուհին ուսուերս կ'ըստատուին Պերլին մայրաքաղաքը , ուր կայսերուհին ամառը պիտի մնայ օգտակարութեան համար :

— Հունգարիոյ (Սաւառիստանի) խռովութեան ժամանակը Ռուսաց տէրութեան Լասգրիոյ օգնութեանը երթալով՝ ըրած ծախքը վճարուելու համար եղած դաշնագրութիւնը վերջապէս ստորագրուեցաւ երկուց տէրութեանց կողմէն : Լասգրիան , նշանակուած ժամանակի մէջ Ռուսաց տէրութեան 1.051.133 ֆիօրինի աղ մատակարարելու է , ու անկէ զատ երեք պայմանաւաճառ 4.615.364 ֆիօրին վճարելու է : Ըստ գումարին առաջին երրորդ մասը արդէն վճարուեր է :

ԱՄԵՐԻԿԱ : Սիւրսեալ նահանգաց կառավարութեան կողմանէ Քոստաթի եղած մարդատիրական հիւրընկալութեանը վրայօք Ուաշինկթընի նստող Լասգրիոյ գետապան իւր տէրութեանը գրած նամակին պատասխանը սպասելով՝ առայժմ Հալանայի կողմը քաշուեր է :

— Վերիկայի մէջ աստարի ձմեռուան եղող նալը խիստ սաստկութեամբ կը շարունակէ , աղբառները ցուրտէն շատ թշուառութիւն կը կրեն և մեռնողներն ալ բազմութիւն են : Չ ըսելիք իրամները (սու խանութքէրի) մեծ ու պղծիկ գետերը սառուցեալ ըլլալով նաւարկութիւնը խափանուեր է , և շատ ծովեղերեայ նաւամատոյցներուն ջուրերը սառնամանեօք կապուած ըլլալուն նաւերը չեն կրնար մօտենալ իրենց առաջադրեալ քաղաքներուն :

ԱԶԳԱՅԻՆ

Թիֆլիզէն կը գրեն թէ մեծահաշակ սրբ. բաղնափայտ Ներսէս եպիսկոպոսապետ և առանցիկ Հայոց կաթողիկոսը յունվար 15 ին առողջ ու անվտանգ յիշեալ քաղաքը հասեր է : Տեղւոյն բնակիչները վեհափառ Քահաճ

նայապետին գալատեան ուրախալի լուրը առնենուն պէս , իսկոյն Հայոց հասարակութեան երեւելիներուն բազմութիւնը շտապէր է քաղաքէն քանի մը մղոն դուրս երթալով՝ գիւմարել ու շնորհալի այցելութիւնը շնորհաւորել : Բայտ սովորութեան 'ի պատիւ առաքելաշնորհ կաթողիկոսին՝ Ռուսաց տէրութեան աստիճանադրներէն ալ շատ անձինք գիւմարութեան գնացած ըլլալով՝ սրբադնագոյն Քահանայապետը ամենապաշտօնը հանգիստ և իւր բարձր աստիճանին արժանի պատուով քաղաքին մէջ մտեր է :

Վեհափառ կաթողիկոսին ալեւոր հասակին նայելով աստիճանի աստիճանի եղանակի մէջ ճանապարհորդութեան աշխատանքը յանձն առնուլը մեծ ապացոյց մըն է Վրաստանի կողմանց Հայերուն վրայ ունեցած հայրական սիրոյն , անոր համար ալ տեղւոյն Հայ հասարակութեանը կողմանէ երախտագիտութեան և ուրախութեան նշաններ կը ցուցնուեր :

Սեփանուն Քահանայապետը տակէ առաջ երկու անգամ ալ գնացած էր Թիֆլիզու ժողովուրդը միթարելու , և ամէն անգամին յիշեալ քաղաքին թէ եկեղեցիներուն և թէ ուսումնարանին մէջ աղբօգուտբարեկարգութիւններ ըրած ըլլալուն համար աներկիտ կը յուսանք որ այս անգամուան շնորհալի գալուստն ալ օգտուէտ գործերէն դատարի չպիտի ըլլայ : այս ըրձալի յուսով մերք ալ 'ի հեռուստ կը շնորհաւորենք նորին վեհափառութեան անվտանգ թիֆլիզ քաղաքը ժամանումը :

— Ուրախութեամբ լսեցինք որ աղբային հոգեւոր և աշխարհական ժողովոց տնօրէնութեամբ շնորհափայլ Սեարոյ վարդապետը կեսարիոյ վիճակին առաջնորդութեան պատրիարքական փոխանորդ ընտրուեցաւ , ու նոյն քաղաքի նախկին առաջնորդ գերապատիւ Յակոբ սրբազան եպիսկոպոսը սուրբ կարգապետի վանից վանահայր անուանեցաւ 'ի կողմանէ ամենապատիւ և ազգասէր բարձր սրբազան Պատրիարքի մայրաքաղաքին :

Կը յուսամք որ յիշեալ արժանապատիւ առաջնորդը և գերապատիւ վանահայրը իւրենց սուրբ կողմանը արժանի միաբանութեան 'ի գործ դնելով՝ իրենց հոգեւոր խնամքը յանձնուած տեղւոյն Հայ հասարակութեան մէջ քանի մը ժամանակէ 'ի վեր դժբաղդաբար ծագած երկպառակութիւնը եղբայրական սիրոյ փոխելու հոգ պիտի տանին , և ուրովհետեւ յիշեալ վիճակի աղբակից եղբայրներին իրենց մայրական լեզուն չգիտնալով իրենց գաղափարները օտար բարբառով մէկ մէկու կը հաղորդեն , Հայոց լեզուի օգտակարութիւնը և անով միայն աղբիս ուրիշ աղբերէն սորոշելը կեսարիոյ ժողովրդեան հասկանալով՝ ուսումնարանաց միջոցաւ հայեկական լեզուի և աղբային պատմութեանց գիւտութեանը զանազ մասնակից ընելու պիտի աշխատին :

— Նոյն անկալութիւնը ունիմք նաև Վաղարիոյ (Նիկիւրի) նորընտիր առաջնորդ գերապատիւ Յակոբ սրբազան եպիսկոպոսէն որ ասկէ առաջ Տիգրանակերտի (Տիարպէր) առաջնորդ էր : Յիշուի աղբասէր սրտի մը շատ ցաւալի է լսել թէ յիշեալ վիճակի հայեկազուն ժողովուրդն ալ զուրկ է մնացեալ հայեկաբանութեան բարեքէն : Սեփապետուց և բոլոր աղբին շնորհակալեացը արժանի և ամենուն ուրախութեանը պատճառ պիտի ըլլայ գերապատիւ Յակոբ սրբազան Եպիսկոպոսը , եթէ խոհեմ ընթացքով և համակուիրաւորութեամբ իւր վիճակին Հայ հասարակութեան սրտին մէջ մեր գեղեցիկ լեզուն գիւտութեան փափաքը ծնուցանէ , և եթէ ասոր պատճառով ուրիշ ուսմանց և գիտութեանց ալ ձեռք բերուելու միջոցները , այսինքն աղբային դպրոցներու հաստատութեան ու բարեկարգութեանը հոգ տանի :

— Սուրբ կարապետի վանից և շրջակայ վանօրէից առաջնորդութիւնն ալ Վաղարիոյ նախկին առաջնորդ արժանապատիւ Սատթեոս ծայրագոյն վարդապետին յանձն

նուած ըլլալով , կը յուսամք որ մեծադոր Տեւրութեան կողմանէ յատկապէս նոյն երեւելի վիճակին բարեկարգութեանը համար հաստատուած կանոններուն գործադրութեանը առաջնանէ աղէկ խնամատարութիւն պիտի տեսնանք : Երբեքնամ 'կայսեր' Հայոց աղբի վրայ ունեցած յատուկ շնորհացը իբր ապացոյց սուրբ կարապետի վանից բարեկարգութեանը և ժողովրդեան բարօրութեանը համար աղբային խորհրդարան ունենալու արտօնութիւն շնորհած է : Սուտի այս բարձրագոյն շնորհացը փոխաբէն յիշեալ վանից կողմանէ ապերախտութիւն եղած կ'երեւայ մեզ , եթէ այն լայնատարած վիճակին համար գրուած բարեկարգատի կանոններուն չհետեւելով վանօրէից գործերը անխնամ ձգելու ըլլան նէ , ինչպէս որ դժբաղդաբար մինչեւ հիմայ եղած է :

Սուրբ կարապետի վանքը շրջակայ վանօրէիքը աղբիս գլխաւոր և բազմահայ վիճակներէն մէկն է . խոհեմ ու աղբասէր առաջնորդին ու այն տեղի ժողովոյն անդամներուն յատուկ խնամքը և ջանացողութեանց պակասութիւն չըլլայ նէ՝ շատ յոյս կայ որ ժամանակով այն վիճակը աղբիս ամենէն լուսաւորեալ մասին ժողովատեղին ըլլայ , որովհետեւ հարկաւորեալ ամեն միջոցները առատ են :

Կը յուսամք թէ վերոյիշեալ հոգեւոր հովիւները պիտի աշխատին մեզ առիթ տալու , որ այսուհետեւ անոնց խնամքը յանձնուած տեղերուն վրայօք լրագրոյս միջոցաւ յիշատակութիւն ընելու ըլլանք նէ՝ երախտագիտութեամբ և գովութեամբ գրենք առնոց պատուական անունները , 'ի պարծանս և 'ի միթարութիւն ընդհանուր աղբիս :

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

Օսմանեան մեծադոր տէրութեան բարեխընամ կառավարութիւնը՝ առատագութեամբ և հպատակաւոր ինքնակալին բարձր ու բարի կամացը համեմատ ուսմունքներու և գիտութիւններու ծաղիկելուն համար ամեն տեսակ դիւրութիւններ և քաջալերութիւններ տուած է և օրէ օր ալ շնորհելու վրայ է : Հոյաւ կայ ուսումնարաններ հաստատելով՝ բարի օրինակ եղած է ամէն աղբի և կրօնի հպատակներուն , որոնք թեպէտ շնորհակալութեամբ կ'ըզգան այսչափ բարութիւնները և քիչ կամ շատ խնամատարութիւն կ'ընեն իրենց դպրոցներուն , բայց եթէ մեզ ներուելու ըլլայ նէ՝ կը համարձակիմք ըսելու որ պէտք եղած օգնութիւնները այնչափ առատաձեւութեամբ չեն նուիրուիր կոր : Սերսիւրը աղբակիցներէն շատերու քով կը տեսնանք ուսումնասիրական և (իրենց խօսքով) ազգայնական ոգի մը . շատերէն կը լրսենք անի բարեկարգիս , անի յառաջադիւնէս Խորհրդէն : Բայց երբոր դրամական սիրտոյից կարգը կուգայ (և առանց դրամայ բան յառաջ չեւթար) կարծես թէ ամեն մարդ կը խրտուի . իսկոյն աչքերը կը գառնան դէպ 'ի քանի մը երեւելի հարուստ ամիրայներուն և անոնցմէ կ'ըստատեն ամեն հարկաւոր եղած օգնութիւնները : Եղբասէր ամիրայները՝ եթէ արգարութեամբ խօսելու ըլլանք՝ երբեք ետ չեն կեցած քիչ կամ շատ դրամական նպատակներ ընելէն . բայց հասարակութիւնը մէկ կարողութիւն չունի ըսելով՝ կը քաշուին , ինչու որ դժբաղդաբար ընկերակցական բազմապատուողութիւն դեռ ինչպէս որ պէտք է նէ՝ տարածուած չէ իրենց մէջ : Իրաւ է որ մէկ հոգի տարր զուռուշ տալով՝ բան մը չկրնար ընել . Բայց հարկը հոգի , երկու հարկը հոգի միաբանական սիրով ընկերանալով տասնական զուռուշ տալու ըլլան նէ քանի մը հաղորդուուել կը հաւաքուի , որով գործի ալ ձեռք կրնայ զարուել : Ենդղիւ , Վերիկա և ուրիշ լուսաւորեալ երկիրներուն մէջ կը տեսնանք ահապէս գործառնութեանց ձեռնարկութիւններ , ու կը զարմանանք թէ ինչպէս

